



ՀԲՄ. ԵԱՏՄ-ԻՆ ՄԻԱՆԱԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՋԵՎ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԲԱՑԻ

02.10.2014 (Արմինֆո)



Հայաստանի համար Եվրասիական տնտեսական միությանը միանալը նոր հնարավորություններ կստեղծի և կհայտնվեն նոր առավելություններ, որոնց պետք է լինել պատրաստ: Հոկտեմբերի 2-ին նման կարծիք է արտահայտել Հայաստանի Բանկերի միության նախագահ Սամվել

Ճզմայանը Երևանում մեկնարկած ՄԲԿ-2014 Միջազգային բանկային կոնֆերանսի շրջանակներում:

«Օրինակ, մի քանի ամիս առաջ հայտնի դարձավ ռուսաստանյան արժույթային շուկայում ինտեգրացիոն նոր նախագծի գործարկման մասին: Մոսկովյան բորսան Եվրասիական տարածաշրջանի բանկերի համար բացեց գործարքներին մասնակցելու հնարավորություն, ընդ որում, դրա համար պարտադիր չէ, որ նրանք ունենան ռուսաստանյան արժույթային լիցենզիա, քանի որ գործարքների իրականացման համար բավական կլինի ազգային ռեգուլյատորի լիցենզիան», - հիշեցրել է ՀԲՄ ղեկավարն իր բացման խոսքում: Նման պայմաններում, շարունակել է նա, բանկերի համար, որոնք զրկված են արևմտյան շուկաներում իրենց ազատ միջոցները տեղաբաշխելու հնարավորությունից, կարող են գրավիչ դառնալ, այդ թվում նաև Հայաստանում, կատարվելիք ներդրումները, իսկ մյուս կողմից, հայկական ֆինանսական կառույցները կստանան ՌԴ կապիտալի շուկայում իրենց գործունեությունն ակտիվացնելու հնարավորություն:

Նշենք, որ հոկտեմբերի 1-ին Երևանում մեկնարկեց բանկային հերթական միջազգային կոնֆերանսը՝ ՄԲԿ-2014-ը, որը կազմակերպել է Մոսկովյան միջազգային արժույթային ասոցիացիան (ՄՄԱԱ): Աշնանային ավանդական կոնֆերանսի թեման այս անգամ կլինի՝ «Բանկերը փոփոխությունների դարաշրջանում. նոր մարտահրավերներ, նոր փորձություններ, նոր հնարավորություններ»: Կոնֆերանսի պաշտոնական հովանավորն է «ԲԲԲ Բանկ» ՓԲԸ-ն: Կոնֆերանսը ընթացավ մինչև հոկտեմբերի 4-ը:

**ՀԲՄ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿԱՅՈՒՆ Է, ԲԱՅՑ ԱՌԱՆՑ
ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԶԷ**

Հայաստանի բանկային համակարգը կարելի է գնահատել որպես բավականաչափ կայուն, բայց առանց պրոբլեմների չէ: Հոկտեմբերի 2-ին նման կարծիք է արտահայտել Հայաստանի Բանկերի միության նախագահ Սամվել Ճզմաչյանը Երևանում մեկնարկած ՄԲԿ-2014 Միջազգային բանկային կոնֆերանսի շրջանակներում: «Մի կողմից, համակարգը 2013 թվականը եզրափակել է հիմնական ֆինանսական բոլոր ցուցանիշների աճով, ինչը վկայում է շարունակական աճի մասին: Մյուս կողմից, անցյալ տարի Հայաստանի տնտեսությունը բախվեց աճի տեմպերի դանդաղմանը, ինչը լրացուցիչ պրոբլեմներ ստեղծեց բանկերի համար», -նշել է ՀԲՄ նախագահն իր բացման խոսքում:

Նրա խոսքով, այնուամենայնիվ, այդ պայմաներում էլ երկրի բանկային համակարգը շարունակում է մեծացնել վարկային ներդրումները երկրի տնտեսությունում: «Մի խոսքով, այսօր մենք գործ ունենք Հայաստանի բանկային համակարգում առկա դինամիկ գործընթացների հետ, քանի որ տեղի են ունենում օրենսդրական լուրջ փոփոխություններ, չնայած հեշտությամբ չեն առաջ գնում կենսաթոշակային բարեփոխումները, իսկ պետական բանկերի բացակայության պայմաններում մեր բիզնեսը դառնում է ավելի շատ մրցունակ, երբ յուրաքանչյուր դոլարի, դրամի և կոպեկի համար ստիպված ենք լինում քրտնաջան աշխատել, փնտրելով եկամուտների նորանոր աղբյուրներ», -նշել է նա:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ ԿՎԵՐԱԴԱՌԱՆՆ
ԱԱՀ-Ի ԴԱՇՏ**

04.09.2014



Հայաստանի բանկերի ֆինանսական գործակալներին կվերադարձնեն ԱԱՀ-ի դաշտ: ԱԱՀ-ի մասին օրենքում համապատասխան փոփոխությունները հավանության են արժանացել կառավարության սեպտեմբերի 4-ի նիստին:

Ինչպես նշվում է օրինագծին կից բացատրագրում, բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական գործակալները (ներկայացուցիչները),

ինչպես նաև բրոքերներն ազատված են ԱԱՀ-ից:

Այդուհանդերձ, նրանք ֆինանսական շուկայում նաև այնպիսի ծառայություններ են մատուցում, որոնց համար նաև ոչ տոկոսային եկամուտ են ստանում, ինչը միջազգային պրակտիկայում ընդունված է հարկել ԱԱՀ-ով: Այստեղ ներառվում են բանկերի և վարկային կազմակերպությունների, ինչպես նաև բրոքերների, վերոհիշյալ ծառայությունները:

ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ. 1 ՄԼՐԴ-ՈՎ ԱՎԵԼ

12.09.2014



«Անելիք Բանկ» ՓԲԸ բաժնետեր լիբանանյան «Կրեդիտ Բանկ Ս.Ա.Լ.»-ն Անելիք Բանկի կանոնադրական կապիտալն ավելացրել է 1 մլրդ ՀՀ դրամով:

Ինչպես հայտնել են Անելիք Բանկում, բաժնետիրոջ կողմից կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ որոշումը կայացվել է դեռևս ընթացիկ տարվա մայիս ամսին: Նշված միջոցներն ուղղվելու են բանկի

ռազմավարական ծրագրի իրականացմանը, զարգացման տեմպերի պահպանմանը, ինչպես նաև մատուցվող ծառայությունների փաթեթի ավելացմանը:

«Կանոնադրական կապիտալի ավելացումը հնարավորություն կտա Անելիք Բանկին իրականացնել առավել լայնածավալ եւ դիվերսիֆիկացված վարկավորում, ընդլայնել մատուցվող ծառայությունների տեսականին՝ ներգրավելով նոր հաճախորդներ, ինչպես նաև ընդլայնել մասնաճյուղերի ցանցը: Ունենալով Լիբանանի խոշորագույն բանկերից մեկի՝ Կրեդիտ Բանկի աջակցությունը՝ վստահ եմ, որ մենք կավելացնենք մեր ձեռքբերումները եւ կկարողանանք առավել հավակնոտ հեռանկարային ծրագրեր իրականացնել», - նշել է «Անելիք Բանկ» ՓԲԸ վարչության նախագահ Ներսես Կարամանուկյանը:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՐԺՈՒՅԹ, ԷՄԻՍԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՄԵԳԱԿԱՐԳԱՎՈՐԻՉ

22.09.2014



Եվրասիական զարգացման բանկի (ԵԱԶԲ) վարչության նախագահ Իգոր Ֆինոգենովը «միանգամայն իրատեսական» է համարում անցումը Եվրասիական միության միասնական արժույթին մինչև 2025 թվականը:

«Միասնական արժույթը պետք է լինի կայուն, ֆինանսական շուկան՝ զարգացած, պետք է լինի թողարկման միասնական կենտրոն

և համաձայնեցված ազգային ֆինանսական քաղաքականություն: Դրա համար դեռևս որևէ խոչընդոտ չկա. քաղաքական կամքն առկա է, հնարավորությունները՝ ևս: Կան 2025 թ-ին Եվրասիական միության ազգային արժույթին անցնելու ծրագրեր: Կարծում եմ, դա միանգամայն իրատեսական է», - ասել է Իգոր Ֆինոգենովը:

Նրա խոսքերով, դրա համար կպահանջվի միասնական մեզակարգավորչի ստեղծում, որը կսահմանի խաղի միևնույն կանոնները եվրասիական ամբողջ տարածքում:

«Եվրասիայի տարածքում առկա են բազմաթիվ արժույթներ՝ այլ լին, դուկատ, տենգե և, իհարկե, ռուբլի: Կարելի է ընտրել ցանկացածը: Ես չեի բացառի, որ հետագայում, օրինակ, ռուբլուն կփոխարինի այլ անվանմամբ արժույթ: Ի վերջո, ռուսական «деньги» և դազախական «տենգե» բառերն ունեն ընդհանուր թյուրքական արմատ: Սակայն կարևորն այնպիսի պայմաններ ստեղծելն է, որոնց պարագայում ցանկացած արժույթ հուսալի կլինի», - նշել է Իգոր Ֆինոգենովը:

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿԸ ՃԱՆԱԶՎԵԼ Է «ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԿ»

27.09.2014



ՎՏԲ-Հայաստան Բանկը հանրային ծառայությունների ոլորտում անցկացվող «Հանրային վարկանիշ» ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ ճանաչվել է «Լավագույն բանկ»: Մրցանակաբաշխությունն անցկացվել է սեպտեմբերի 27-ին Ա. Սպենդիարյանի անվան Օպերայի ու բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

Այս տարվա ապրիլին Gallup International սոցիոլոգիական ընկերության հայաստանյան ներկայացուցչությունը Հայաստանի ողջ տարածքում անցկացրել է սոցիոլոգիական հարցում լավագույն բանկ ճանաչելու նպատակով: Հարցման արդյունքում, որն անցկացվել է 1067 հոգու շրջանում ՀՀ բոլոր մարզերում, և «Հանրային վարկանիշ» ընկերության փորձագիտական եզրակացության արդյունքում ՎՏԲ-Հայաստան Բանկը ՀՀ բանկերի շրջանում ճանաչվել է լավագույնը: «Լավագույն բանկ» մրցանակը ՎՏԲ-Հայաստան Բանկի գլխավոր տնօրեն Յուրի Գուսևին հանձնեց ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Կարինե Աճեմյանը:

«Հանրային վարկանիշի» կողմից ՎՏԲ-Հայաստան Բանկի ճանաչումը որպես Հայաստանի լավագույն բանկ կարևոր իրադարձություն է: Սա բանկի ողջ թիմի ջանասեր աշխատանքի ու գործին նվիրվածության ցուցանիշ է: Կցանկանայի շնորհակալություն հայտնել կազմակերպիչներին անաչառ գնահատականի համար և նշել, որ այս մրցանակը ինչպես մեր աշխատակիցների, այնպես էլ բանկի հաճախորդների ձեռքբերումն է: Մենք շարունակելու ենք ընդլայնել բիզնեսը և հայկական շուկա մտցնել նոր ծառայություններ ու պրոդուկտներ», -ասել է ՎՏԲ-Հայաստան Բանկի Գլխավոր տնօրեն-Տնօրինության նախագահ Յուրի Գուսևը:



ԱԿԲԱ-ԲԱՆԿԸ ՍՏԵՂԾԵՑ ԵՆԹԱԲԵՆՂ

29.09.2014



ACBA-CREDIT AGRICOLE BANK-ը փոքր և միջին բոլոր ձեռնարկություններին «ԱԿԲԱ Բիզնես Փարթնր» ենթաբրենդի ներքո առաջարկում է մասնակցել «Դարձիր գործընկեր» արշավին, որը մեկնարկում է սեպտեմբերի 28-ից և կտևի մինչև դեկտեմբերի 12-ը: Նոր ենթաբրենդի նպատակը բանկի կողմից իրավաբանական անձանց առաջարկվող բոլոր պրոդուկտների

միավորումն է, այլ խոսքով, կորպորատիվ հաճախորդների բոլոր պահանջների համապատասխան համալիր և միաժամանակ անհատական լուծումների մշակումը:

Նոր ենթաբրենդի շրջանակներում սեպտեմբերի 28-ին մեկնարկել է «Դարձիր գործընկեր» արշավը, որի շրջանակներում մինչև դեկտեմբերի 12-ը իրավաբանական անձինք, տեղափոխելով իրենց բիզնես վարկը ACBA-CREDIT AGRICOLE BANK, հնարավորություն կունենան ստանալ նոր վարկ, ընդ որում, իրենց գործող վարկի տոկոսադրույքից մինչև 30 % ավելի ցածր տոկոսադրույքով, ինչպես նաև 3% տոկոսադրույքով ավելի ցածր՝ հաջորդ յուրաքանչյուր տարվա համար: Կարող են ստանալ նաև ներմուծման/արտահանման խթանման վարկ, վարկային գիծ – 8.99%, անվճար օգտվել << ACBA ON-LINE>> համակարգից, ստանալ անվճար VISA

BUSINESS քարտ, անվճար ArCa BUSINESS լրացուցիչ քարտ: Մինչև 14,000,000 ՀՀ դրամ վարկերի դեպքում որոշումը կայացվում է 1 ժամում: ACBA ON-LINE ծառայությունը և VISA BUSINESS քարտը տրամադրվում են անվճար առաջին 12 ամիսների համար:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ ՍՏԱՑԱՎ ՀՈՒԱՆԴԱԿԱՆ ՎԱՐԿ

30.09.2014



Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերությունը (FMO) 15 ԱՄՆ մլն դոլար վարկ է տրամադրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻՆ՝ բիզնեսի վարկավորման նպատակով: Վարկը շահառուներին տրամադրվելու է հինգ տարի մարման ժամկետով 10-12 տոկոս դրույքաչափով մինչև 1մլն ԱՄՆ դոլար սահմանաչափով: Վարկային միջոցներից կարող են օգտվել մինչև 300 աշխատող

ունեցող այն ձեռնարկությունները, որոնց ընդհանուր ակտիվները չեն գերազանցում 15,000,000 ԱՄՆ դոլարը: Վարկային միջոցներն առավելապես կուղղվեն արտահանող ընկերությունների բիզնես ծրագրերի ֆինանսավորմանը:

«Թեև սա Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերության հետ մեր համագործակցության առաջին ծրագիրն է, սակայն հույս ունենք, որ կունենանք երկարաժամկետ, փոխշահավետ համագործակցություն և վարկի շրջանակներում կկարողանանք մեր հաճախորդներին առաջարկել երկարաժամկետ, մատչելի, մրցունակ պայմաններով ֆինանսավորում», - հայտարարել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանը՝ Հոլանդական զարգացման բանկի «Exchange on the Future of Banking» թեմայով երրորդ տարեկան ժողովի շրջանակներում պայմանագրի ստորագրման արարողության ժամանակ: Միաժամանակ նա բարձր է գնահատել Հայաստանում ընկերության կողմից ընդհանուր առմամբ իրականացված ներդրումների արդյունավետությունը:

«ԻՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻԱՄՍՅԱԿ»-Ը՝ 2-ՐԴ ԱՆԳԱՍ

01.10.2014



Հոկտեմբերի 1-ին ՀՀ Կենտրոնական բանկում (ԿԲ) տրվել է «Իմ ֆինանսների միամսյակ» ծրագրի մեկնարկը, որի շրջանակում մեկ ամիս շարունակ Երեւանում եւ մարզերում կիրականացվեն ֆինանսական կրթության մակարդակի բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներ:

Արդեն երկրորդ տարին իրականացվող ծրագրին մասնակցում են ՀՀ առևտրային բանկերը, վարկային կազմակերպություններն ու

ապահովագրական ընկերությունները:

«Թեկուզ այն փաստը, որ 17 խոշոր կառույցներ մասնակցում են այս ծրագրին, վկայում է վերջինիս կայացման ճանապարհին գտնվելու մասին: Այս ծրագիրը վերջերս մշակված ֆինանսական կրթության ազգային ռազմավարության կարևոր հատվածներից է», - ասել է ՀՀ ԿԲ Խորհրդի անդամ Արմենակ Դարբինյանը:

«Բանկերի հետ համատեղ նպատակ ունենք որպես թիրախային խումբ դիտարկել այն հաճախորդներին, ովքեր պակաս տեղեկացված են կամ ընդհանրապես չեն օգտվում բանկերի ծառայություններից: Ծրագրի շրջանակում բանկերի կողմից կազմակերպված միջոցառումները հիմնականում ուղղված են լինելու դպրոցականների եւ ուսանողների շրջանում իրազեկվածության բարձրացմանը; Բանկերը ակտիվ կլինեն նաեւ ավտոբուսային էքսկուրսիաների ընթացքում, իսկ «բաց դռների օրվա» շրջանակում հաճախորդներին հնարավորություն կընձեռվի բանկերի գործունեությանը հետեւել ներսից», - իր խոսքում նշել է Հայաստանի բանկերի միության գործադիր տնօրեն Մեյրան Սարգսյանը, հավելելով, որ բանկերի կողմից հատուկ «բաց դռների օրը» կառաջարկվեն շատ ավելի մատչելի ծառայությունների եւ պրոդուկտներ:

Միջոցառմանը ներկա ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության փոխդեսպան Նադիա Լիխտենբերգերը նշել է, որ Գերմանիայի կառավարության համար չափազանց կարևոր է Հայաստանի ֆինանսական հատվածի ֆինանսական գիտելիքների ավելացումը: Նրա փոխանցմամբ, Գերմանիայի խնայքանկերի միջազգային համագործակցության հիմնադրամը առանցքային գործընկեր է այս նպատակի իրագործման հարցում:

Այս տարվա ծրագրի շրջանակում նախատեսված է «Ֆինանսական շրջագայություն»

ավտորուսով, բանավեճեր եւ սեմինարներ բուհերում, «Ի՞նչ, Որտե՞ղ, Ե՞րբ» ինտելեկտուալ խաղի անցկացում մոտ 70 ուսանողների մասնակցությամբ, «Երագանքների ծառ» եւ մի շարք այլ միջոցառումներ:

Ծրագիրն իրականացնում են ՀՀ Կենտրոնական բանկը, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը, Ֆինանսական համակարգի հաշտարարը, Հայաստանի բանկերի միությունը, Ապահովագրական շուկայի մասնակիցների ասոցիացիան, Վարկային կազմակերպությունների միությունը, Հայաստանի հիփոթեքային շուկայի մասնակիցների ասոցիացիան, Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոն, ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիան, KfW-Kreditanstalt für Wiederaufbau, SBFIC-Գերմանիայի խնայբանկերի միջազգային համագործակցության հիմնադրամը, Հայաստանի պատանեկան նվաճումներ ՀԿ-ն:

«Իմ ֆինանսների միամսյակ» ծրագիրը կեզրափակվի նոյեմբերի 4-ին:

ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿՆ ԻՋԵՑՆՈՒՄ Է ՍԱԿԱԳՆԵՐԸ

01.10.2014



Անելիք Բանկն իր հաճախորդներին առավել նպաստավոր պայմաններ և հավելյալ հնարավորություններ տրամադրելու նպատակով վերանայել է մի շարք ծառայությունների դիմաց գանձվող միջնորդավճարները՝ դրանք դարձնելով առավել մատչելի և մրցակցային: Մասնավորապես, վերանայվել են «Բանկ-հաճախորդ» համակարգի, SWIFT միջազգային

վճարային համակարգով իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից կատարվող փոխանցումների, ինչպես նաև մի շարք այլ ծառայությունների սակագներ:

Այսուհետ «Բանկ-հաճախորդ» համակարգով գործարքներ կատարելու իրավասության տրամադրման համար իրավաբանական անձանցից գանձվող տարեկան վճարը կկազմի 20,000 ՀՀ դրամ, իսկ ֆիզիկական անձանցից՝ 5,000 ՀՀ դրամ: Հիշեցնենք, որ նախկինում նշված ծառայության համար բանկի հաճախորդները վճարում էին ամսեկան համապատասխանաբար 4,000 ՀՀ դրամ և 900 ՀՀ դրամ:

Սակագնային նման փոփոխությունը թույլ է տալիս հաճախորդներին կրճատել սպասարկման վճարի գծով իրենց տարեկան պարտավորությունները ավելի քան երկու անգամ: Տեղեկացնենք նաև, որ այսուհետ «Բանկ-հաճախորդ» համակարգով հաճախորդների հաշիվների դիտման իրավասության տրամադրման համար նրանցից տարեկան կամ ամսական սպասարկման վճար չի գանձվելու: Համակարգին միանալու համար (թե դիտման իրավասության և թե գործարքներ կատարելու իրավասության տրամադրման համար) անհրաժեշտ է կատարել մեկանգամյա վճար՝

իրավաբանական անձանց դեպքում 10,000, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ 5,000 ՀՀ դրամ: Նշենք նաև, որ SWIFT համակարգով իրականացվող միջազգային փոխանցումները հոկտեմբերի 1-ից հնարավոր կլինի կատարել՝ սկսած 3000 ՀՀ դրամից նախկին 7,500 ՀՀ դրամի փոխարեն:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՋԵԲ-Ի ՀԵՏ

01.10.2014



Արմավիսբանկի եւ ՎՋԵԲ-ի միջեւ կնքվել է 5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով ՓՄՁ վարկավորման հերթական պայմանագիրը:

Պայմանագրի շրջանակներում «ՓՄՁ վարկավորման» ծրագրի պայմաններին բավարարող ձեռնարկություններին նախատեսվում է տրամադրել ՀՀ դրամով, միջեւ 5 տարի մարման ժամկետով, 300 մլն դրամ գումարը չգերազանցող մինչեւ 14% տարեկան տոկոսադրույքով վարկեր:

Վարկավորման համար կարող են դիմել այն ձեռնարկությունները, որոնց աշխատակիցների քանակը չի գերազանցում 250-ը: Վարկերը տրամադրվում են հիմնական միջոցների ձեռքբերման, շրջանառու միջոցների համալրման, ինչպես նաեւ գործունեության ընդլայնման եւ զարգացման նպատակով:

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միությունն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,

- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ uba@uba.am: